Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 12.11.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը,
(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)
հետևյալ կազմով.
նախագահությամբ՝ իրավ. գիտ. թեկնածու Կարեն Հակոբյանի
մասնակցությամբ անդամներ՝ դատավոր Դանիել Դանիելյանի
դատավոր Աննա Դիլբարյանի,

քննարկելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ հավակնորդի կողմից բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Հավակնորդը բողոքարկել է վարչական իրավունք բաժնի 25-րդ, 43-րդ և վարչական դատավարություն բաժնի 17-րդ առաջադրանքները:

Հավակնորդի բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննարկելով բողոքը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

<u>Վարչական իրավունքի բաժնի 25-րդ առաջադրանք.</u>

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 1) տարբերակը, այն է՝ *այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ օրենքով սահմանված անվավեր, առ ոչինչ կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել,* մինչդեռ՝ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 2)-ն է, այն է՝ *այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ օրենքով սահմանված անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:*

Հավակնորդի փաստարկներն ըստ էության հանգում են նրան, որ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու դեպքում դրա գործողությունը ևս դադարում է, հետևաբար իր ընտրած տարբերակում թվարկված է սպառիչ պատասխանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված են վարչական ակտի առ ոչինչ լինելու հիմքերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ առ ոչինչ վարչական ակտն **ընդունման պահից իրավաբանական ուժ չունի** և ենթակա չէ կատարման կամ կիրառման:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ առ ոչինչ վարչական ակտն ի սկզբանե չի կարող ունենալ իրավաբանական ուժ և առաջացնել իրավական հետևանքներ, այսինքն՝ այն ընդունման պահից համարվում է գոյություն չունեցող վարչական ակտ:

Ինչ վերաբերում է դատարանի կողմից վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու մասին Հավակնորդի փաստարկին, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչվում է վարչական ակտի առ ոչինչ **լինելը,** այսինքն՝ ի սկզբանե դրա իրավաբանական ուժ չունենալու հանգամանքը:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 25-ի վերաբերյալ Հավակնորդի նշված տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

<u>Վարչական իրավունքի բաժնի 43-րդ առաջադրանք.</u>

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 1) տարբերակը, այն է՝ *վարչական վարույթը բաղկացած է հարուցման և եզրափակիչ փուլերից,* մինչդեռ՝ ուղենիշային տարբերակում ճիշտ տարբերակն է 2)-ը, այն է՝ *վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:*

Հավակնորդը նշել է, որ իր տարբերակը չի կարող համարվել սխալ, քանի որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքների համադրված վերլուծությունից հետևում է, որ իրավախախտման հատկանիշների պարզումը վարչական վարույթի հարուցման, իսկ վարչական ակտի ընդունումը վարչական վարույթի եզրափակիչ փուլերն են: Միաժամանակ վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/1570/05/14 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/1570/05/14 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշմամբ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը. «Նշված հանգամանքով պայմանավորված՝ օրենսդիրը տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ *իրավախախտման հատկանիշների պարզման **(հարուցման)** և վարչական ակտի ընդունման **(եզրափակիչ)** փուլերը»:*

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ Հավակնորդի կողմից նշված տարբերակը ևս պետք է դիտել որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

<u>Վարչական դատավարության բաժնի 17-րդ առաջադրանք.</u>

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 3) տարբերակը, այն է՝ *վճռաբեկ բողոքը բերել է այն անձը, որը վճռաբեկ բողոք բերելու իրավունք չուներ,* մինչդեռ՝ ճիշտ պատասխանն է 2)-ն, այն է՝ *ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելուց հետո վճռաբեկ բողոքը ներկայացվել է կրկին, սակայն չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշման մեջ նշված թերությունները:*

Հավակնորդը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի ուսումնասիրությունից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ

վերադարձված բողոքում կրկին չեն կատարվել դատարանի կողմից նշված շտկումները, վերացվել թերությունները, ապա տվյալ դեպքերի համար առհասարակ որևէ կարգավորում չկա: Նշել է նաև, որ վճռաբեկ բողոքը վերադարձվելու և դրանում կրկին շտկումներ չկատարելու դեպքում բողոքը նույնպես թողնվում է առանց քննության:

Հանձնաժողովն արձանագրում է, որ հարցը ձևակերպված է հետևյալ կերպ. «*Ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի*՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմք չէ», այսինքն՝ Հավակնորդից պահանջվել է նշել այն տարբերակը, որը հիմք չէ բողոքն առանց քննության թողնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու հիմքերը, մասնավորապես՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.

2) վճռաբեկ բողոքը բերել է այն անձը, որը վճռաբեկ բողոք բերելու իրավունք չուներ.

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) վճռաբեկ բողոք բերած անձը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Վերոթվարկյալ հիմքերի մեջ բացակայում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելուց հետո վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու, սակայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշման մեջ նշված թերությունները չվերացնելու հիմքը:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 17-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 1739 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ Վարչական իրավունքի բաժնի 43-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԻԼԲԱՐՅԱՆ